ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2013- 09.12/691
09.12.2013 թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ

Վահրամ Շահինյանին

Հարգելի պարոն Շահինյան,

Սույն թվականի հոկտեմբերի 14-ին կազմակերպության թիվ Ե/2013.14.10/618 գրությամբ դիմել եմ Ձեզ, որով ներկայացրել եմ առաջարկություններ, որոնց բացահայտումը կարող է բացահայտել նաև 2008թ. մարտի 1-ին տեղի ունեցած հանցագործությունները՝ մասնավորապես տասը զոհերի մահվան հանգամանքները:

2013թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևորագույն գործերով քննիչ Ա. Գրիգորյանի կողմից ստացվել է պատասխան, որով ըստ էության կազմակերպության կողմից բարձրացված հարցերին պատասխան չի տրվել:

Ելնելով վերը նշվածից և հիմք ընդունելով, այն հանգամանքը, որ 2011թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից հրապարակվել է տեղեկատվական իրազեկում 2008թ. մարտի 1-2 մայրաքաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների դեպքերի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող քրեական գործով նախաքննության արդյունքների մասին հանրային իրազեկումը: Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե 2008թ. մարտի 1-2-ին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ քննվող քրեական գործի շրջանակներում

- արդյո՞ք հարցաքննության կանչվել և հարցաքննվել են այդ ժամանակ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, այդ ժամանակ ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, ՀՀ նախկին գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, ՀՀ նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանը, ՀՀ նախկին պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանը և ՀՀ ՊՆ տեղակալներ՝ Միքայել Գրիգորյանը և Գ. Մելքոնյանը, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Մեյրան Օհանյանը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության նախկին և ներկայիս պետ Գորիկ Հակոբյանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի հրամանատարը և նրա տեղակալները հետևյալ հարցերի պարզաբանման շուրջ.

- ինչ բովանդակությամբ հրահանգներ, ցուցումներ է տրել Ռոբերտ Քոչարյանը 2008թ փետրվարի 24-ից մինչև 2008թ. մարտի 10-ն ընկած ժամանակաշրջանում նշված անձանցից յուրաքանչյուրին, երբ է տվել, ինչ հիմնավորմամբ և ինչ նպատակներով,

- ինչ բովանդակությամբ հրահանգներ, ցուցումներ են ստացել Ռոբերտ Քոչարյանից նշված պաշտոնատար անձինք 2008թ փետրվարի 24-ից մինչև 2008թ. մարտի 10-ը ժամանակահատվածում, երբ են ստացել, ինչ հիմնավորմամբ և ինչ նպատակներով:

- արդյո՞ք հարցաքննության կանչվել և հարցաքննվել են 2008թ. մարտի 1-ի փաստահավաք խմբի անդամներ Ս.Սաֆարյանի և Ա.Քոչարյանի կողմից 2009թ. օգոստսի 24-ին հրապարակված 2008-ի մարտի 1-ի իշխանության կազմակերպած և իրագործած գործողության նախապատրաստական դրվագներից մեկի վերաբերյալ զեկույցում նշված անձինք՝ Գագիկ Ծառուկյանը, Վաչիկ Ղազարյանը, Սուրիկ Խաչատրյանը, Գագիկ Բեգլարյանը, Լևոն Սարգսյանը, Հովիկ Աբրահամյանը, Սամվել Ալեքսանյանը, Առաքել Մովսիսյանը, Միհեր Սեդրակյանը ինչպես նաև ցուցակումում չընդգրկված Ռուբեն Հայրապետյանը, որոնց թիկնապահներին և թիկնազորերին են հատկացվել զինվորական համազգեստներ, պարզելու համար.

-ումից, երբ, ինչ բովանդակությամբ հրահանգներ են ստացել և ինչ նպատակով.

- արդյո՞ք պարզվել է, վերը նշված պաշտոնատար և ոչ պաշտոնատար անձինք և նրանց թիկնապահները նշված ժամանակահատվածում որտեղ են գտնվել, ինչ նպատակով և ինչ գործողություններ են կատարել 2008թ. փետրվարի 24-ից մինչև 2008թ.մարտի 10-ն ընկած ժամանակահատվածում
- հատկապես 2008թ. մարտի 1-ին, որ թիկնապահական խմբերին, որ պետական կառույցներին ուժեղացված պահպանության հրահանգ է տրվել, և ինչ գործողություններ կատարելու հրահանգներ են տրված եղել, որ դեպքերում կատարելու նպատակով:

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե ՀՀ հատուկ քննչական ծառայությունը պատրաստվում է արդյոք ևս մեկ անգամ հրապարակել տեղեկատվական իրազեկում 2008թ. մարտի 1-2 մայրաքաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների դեպքերի առթիվ և երբ:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am